

ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԳԱՂՂԻՈՅ ԱՄԻԱՆ ՈՒ ԿՐԸՆՈՊԼ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ամիան՝ երբեմն զլիաւոր քաղաք Բիկարտիոյ, և հիմա Սոմ դաւառին շինաւայր տեղին, շինուած է Բարիզէն 31 փարսախ հեռու դէպ 'ի հիւսիս, Սոմ համանուն գետոյն վրայ: Երկու մաս կը բաժնուի. Ամիան վերին, որ գեղեցկալէն է և ունի վայելուչ ու ընդարձակ փողոցներ, և Ամիան ստորին, որուն շէնքերը հին են: Լուղովիկոս ժԱ այս վերջինը՝ Ե իմ փողբիկ վենետիկս, կը կոչէր:

Հասարակաց շէնքերուն մէջ նշանաւոր է Կաթողիկէն Տիրամօր՝ գոթացի ճարտարապետութեամբ, որ սկսաւ շինուիլ յամին 1220 և աւարտեցաւ յամին 1288. բայց աշտարակը որ 70 մեգրի բարձրութիւն ունի, 1529ին շինուած է: Այս եկեղեցին Գաղղիոյ գեղեցկագունից կարգէն է, և ձեղունը բարձր է քան զամեն եկեղեցեաց. ուրուն ճարտարապետն էր Հոռերտ Լիւքսառշ (Luzarches): Յիշատակութեան արժանաւոր են նաև արձունի ապարանքն՝ որ հիմնարկեցաւ 1600ին, Նաբոլէոնեան թանգարանն, որ հաստատեցաւ 1855ին, և ճեմելիքներն՝ որ գեղեցկութիւն են քաղաքին:

Ամիան ունի շատ մը գործարաններ, ինչպէս՝ կերպասուց, կտաւի, ձնձոյ և շահափաճառ մեծ: Ունի հիմա 52,000 բնակիչ. և հօս ծնան Պետրոս Անապատաւոր՝ որ յարոյց առաջին խաչակրութիւնը, Վուաղիւր, Կրըսէ, Տըլամպըրը աստեղաբաշխ, և այլն:

Կը կոչուէր 'ի հնումն Սամարտրիւկ, քաղաք Ամբիացւոց, ժողովուրդ հնոյն Գաղղիոյ. անոր համար ըսուեցաւ ապա Ամբիանոն, և վերջապէս Ամիան: Տիրեց անոր Յուլիոս Կեսար և բարգաւաճ քաղաք մ'եղաւ Հռովմայեցւոց ժամանակ. իսկ քրիստոնէութիւնն չորրորդ դարուն սկիզբները մտաւ հօն Ս. Փիրմինոսի քարոզութեամբ: Իննեորդ դարուն մէջ շատ անգամ աւարեցաւ 'ի Նորմանտացւոց, և անոնց իշխանութեան տակ մնաց ժամանակ մի:

Ամիանցիւր երկար ատեն կռուեցան Նորմանտացւոց դէմ, մինչև որ պաշտպանութիւն գտնալով Լուղովիկոս Յոյր թագաւորէն, առանձին կառավարութիւն մ'ընդունեցան 1112ին: Յամին 1185 Ամիան քաղաքն ու գաւառն Գաղղիոյ թագին հետ միացան, բայց ապա Պուրկինեի անցաւ Առասի դաշնակցութեամբ 1425ին: Եւ այսպէս մնաց 60 տարւոյ չափ. մինչև որ 1487ին, Լուղովիկոս ժԱ տիրեց անոր բոլորովին: Այլ 1597ին Սպանիացիք յանկարծակիի բերելով՝ գրաւեցին, բայց մի և նոյն տարւոյն մէջ ալ կորսնցուցին:


Երեւի է Ամիանի խաղաղութիւնն, 1802 ամին մարտի 27ին դաշնակցութեամբ, ընդ մէջ Գաղղիոյ, Անգղիոյ, Սպանիոյ ու Հոլանտայի: Նոյն դաշնակցութեան զօրութեամբ՝ Անգղիա ետ պիտի դարձընէր իր գաղթականութեան կալուածները, բաց 'ի Սէլան

ու Երրորդութեան կղզիներէ. Գաղղիա
պիտի պահէր իր անձնական կալուած-
ները, այնու դաշամբ՝ որ պիտի պար-

պէր իր զօրքերը Հռովմայէն ու Նաբո-
լիէն: Մալդա պիտի դառնար նորէն
Ասպետաց կարգին, և Սպանիա ու Հո-



Ա Մ



Կ Բ Ը Ն


պօլիս անուանեց: Այս քաղաքը շի-
նուած է իզելու գետոյն քով, և բարիքէն
146 փարսան հսկու է: Ճէնքերուն
մէջ անուանի են կաթաղիկէն, Դատա-

տամարանն, և կրճնէգ ու Զինուց հրա-
պարակները:


570ին Լոնգորարտացիք կորակոր
յաղթուեցան իր պարսպաց տակ: Սա-

լանտա պիտի ստանային նորէն իրենց
գաղթականութեան կալուածները :

Իսկ Կրճնույլ Ալլբրոդաց Հին Օթթի-
տու՛մ քաղաքն է, զոր ապա Գրատիա-
նոս Կայսրն յանուն իւր Գրատիանու-



Ա Ն



Ա Պ Լ

րակինոյք աիրեցին անոր. ապա իր ե-
պիսկոպոսոց իշխանութեան տակ ան-
ցաւ, և յետ զանազան այլայլութեանց՝
Տոֆէնայ Հետ միացաւ, և վերջապէս

Գաղղիոյ թագին Հետ 1349ին :

Կրճնական ու Հաւատարմական պա-
տերազմունք ուղիտաբերը եղած են
Կրճնույլի, որոց յաջորդելով ապա քա-

չաքական երկպառակութիւնը, յաւեր
և 'ի կործանումն տարին զքաղաքը:

Ունի կրքնալ շեմարան, դպրոց ի-
րաւաբանութեան, մատենադարան,
թանգարան բնական պատմութեան ու
հնութեանց, և պարտեզ բուսաբանա-

կան: Ենած են հօս Պայար ասպետ,
վոգանտն, Գոնտիյեպը, ու Պառնաւ:
Գաղղիոյ քաղաքաց մէջ նախ կըր-
նոպլ բացաւ իր դռները նաբոլէոնի ա-
ռալնոյն, երբ կը դառնար էլպա կըղ-
ջիէն:

ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՆՈՒԹԻՒՆՔ ՅԱՓՐԻԿԷ

Նիշոսի հովտէն քիչ հեռու գէպ արեւ-
մուտք, դիմացնիս լեռանց երկայնանիստ
գօտի մը կ'ենլայ, որ կը պաշտպանէ գե-
ղիպոսոս անապատին աւազէն ու խորշա-
կէն: Այդ լեռանց միւս կողմը՝ կը տա-
րածուի Լիբէաստան, երկիր մը որ աւելի
հնոց ծանօթ էր քան թէ նորոց. ահաւոր
ծով մ'աւազոյ, ուր հազիւ երբեք կը տես-
նուին ովասիսք, և անոնք իսկ շարունակ
նշաւակ եղած են աւազուց բուռն արշաւա-
նաց: Երկիրն թէպէտ մեռեալ ու անկեն-
դան է, բայց քիչ տեղ կը գտնուի որ ասոր
պէս ճոխ ասպարէզ մ'ունենայ ուսումնա-
կան քննութեանց. վասն զի կը պարու-
նակէ իր ծոցոյն մէջ նախկին պատմու-
թեան նշմարներ ու նախընկնդեղեան ժա-
մանակեաց հետքեր: Հօս անապատին սե-
մոց վրայ և քանի մը ծանօթ ովասիսից մէջ
գտնուեցան հին մտնենաց աւերակներ ու
գայլախաղէ գործիներ, որոնք կը վկայեն
թէ մարդկային ճարտարութիւնը վաղժա-
մանակեայ է. դարձեալ կը նշանակեն աշ-
խարհացոյցք թէ հօս մեծ գետոյ մ'անկո-
ղին եղած ըլլայ, և կ'ըսուէր թէ Նիշոսի
ճիւղերէն մէկն ըլլայ, բայց ոչ որ հասեր
էր հօս, Հօնկէց կ'երթըցուէր նոյնպէս
Վիրենական երկիրը, երբեմն բարեբեր
Սիրիլիոյ պէս, իսկ այսօր ամուլ անապատ
մ'է և տեղի ժանտախտի, որ քստմնեցնել
կու տուն Պեկադիանունը, շինավայր տեղի,
որ ելած է Բերիքիկեայ աւերակներէն:
Այս տեղեաց մօտենալու առնել, կարծես
մեռելոց քաղաք մը կ'երթաս, ուր հին աշ-
խարհակալաց կառքերուն գծած անիւ-
ներն, և Արիստիպեայ ու Վալիմաքեայ և
նախկին բարգաւաճանաց յիշատակներն

կը ներկայացնեն երկիր մը կրկնապէս
կենդանի, անձամբ ու պատմութեան հին
անցքերով:

Ոչ որ յարմար էր քան գգերարտոս
Ռուլֆս (Gerardo Rohlf) 'ի գլուխ հանելու
արշաւանք մը՝ գոր որոշեր էր Եգիպտոսի
Խտիվը նոյն կողմերը զրկելու: Ռուլֆս ար-
դէն տեսած էր կիրենական երկիրը, և
ըսած՝ թէ 'ի հնումն մեծ ծով մ'եղած պիտի
ըլլայ ընդ մէջ Սիրթայ ու լիբէական լե-
ռանց, Կտրած անցած էր նոյնպէս Միջեր-
կրականէն մինչև Կուինէայի ծոցը եղած
միջոցը և ուրիշ կողմեր. յանդուգն ուղե-
ութիւնք որոց վրայ զարմացեր էր արդէն
բոլոր աշխարհ: Այս նոր արշաւանաց առ-
թիւ միացան հետը ուրիշ երևելի անձինք
ալ ու գիտնականք, որոց ամեն պէտքը հո-
գալով Եգիպտոսի կառավարութիւնը ճամ-
բայ գրաւ:

Միկնեցան Սիութէ և դիմեցին գէպ 'ի
Ֆարաֆրա՛հ ովասիսը, ուսկից կը մտա-
ծէր Ռուլֆս երթալ 'ի Քուֆարա՛հ ութ հա-
րիւր քիլոմեդր գէպ արեւմուտք, Թիպէս-
գի մօտ: Բայց զանազան ճանապարհոր-
դաց ըսածին համեմատ, բնութեան անդի-
մազերելի արգելից պատճառաւ՝ անկարելի
էր նոյն կողմին վորձել իրենք ալ. և Քու-
ֆարահէն վեց օր յառաջնիւնէն հտըը, տե-
սան անապատը իր ահաւոր մերկութեամբ
ըր: Ոչ կանաչութիւն կար և ոչ թիզ մը
հաստատուն երկիր. ամեն կողմ՝ անպտուղ
աւաղ մը՝ որ կ'եռար ոտից տակ, և կամ կը
թռչէր օդոյ միջէն ամպանման: Ուղեորք
ու կենդանիք պատրաստ էին ամեն բանի,
ունէին քսան օրուան համար ջուր ու կե-